Միակ «փոքր» տարբերութիւնը այն է, թէ իսրայէլեան բռնազրամանը ուղղակիորէն Արիէլ Շարոնի, Պենիամին Պընի արարքները կը գործուին յուսահատ անհատներու կողմէ՝ ընդհանրապէս հակառակ Արաֆատի փափաքին: Արաֆատի կրակմարի գորակցութիւնը յայտնելէն եւ հետեւներուն բարի գտնելի մաղթելէն ժամ մը ետք, անձնասպանական գործողութիւն կատարող մը ինքզինքը պայթեցնեց Նեթանիա քաղաքի պաշտպանի մը մէջ, սպաննելով 22 անմեղ հրեաներ, որոնք գատիկ կը տօնէին: Այս արարքին պատասխանատու նկատուեցաւ Արաֆատը եւ իսրայէլեան պաշտպանութեան Պերքին ուժերու յարձակողական արդարացուեցաւ այս ամբաստանութեամբ:

Յամենայնդէպս, իսրայէլեան պատերազմական ոճիրներու Շարոնի պատասխանատուութեան մը եւ բռնազր-



Իսրայէլեան հրասայլ մը Բեթղեեմի մէջ կը ձգնէ պաղեստինցիի մը ինքնաշարժը:

թիւնը ամբողջովին կ'անտեսուի: Ո՞վ պէտք է ձեռք բախտուի մօտաւորապէս 100 պաղեստինցի թիրախներու սպանութեան համար: Ո՞վ պիտի բռնաբարկուի աւելի քան 120 պաղեստինցի բժիշկներու մահուան համար:

Ո՞վ պիտի դատուի վերջին 18 ամիսներուն աւելի քան 1200 պաղեստինցիներու մահուան եւ աւելի քան 3 միլիոն քաղաքացիներու հաւաքական պատմութեան համար: Եւ ո՞վ միջազգային դատական ատեան պիտի կանչուի պաղեստինեան բռնազրամանը հողերու վրայ անօրէն ձեռով հատատուելու եւ աւելի քան 35 տարի ՄԱԿի օրէնքներուն չենթարկուելու համար:

Անձնասպանական գործողութիւնները չեն կրնար բաղդատուիլ այն պետական ահաբեկչութեան հետ, գոր կը գործինք իսրայէլի կառավարութիւնը: Առաջինը յուսահատութեան անհատական արարքներն են ժողովուրդի մը, որ ոչ մէկ ապագայ կը տեսնէ եւ լայնօրէն անտեսուած է անարդար եւ խեղափոխութեամբ միջազգային հանրային կարծիքի մը կողմէ:

Վերջինը աշխարհի միակ գերագանց ուժին կողմէ լաւապէս գինուած, ֆինանսաւորուած եւ հովանաւորուած պետութեան մը եւ բռնազր-

ՇԱՐՈՆ ԱՆԽՏՐԱԿԱՆ Է (ՆԱԵՒ ՕՏԱՐԱՄԱՏԱԿՆԵՐՈՒ ԵՒ ԼՐԱԳՈՐՈՆԵՐՈՒ ԸԱՆՂԵՊ)

Խաղաղութեան գորակից եօթը օտարահպատակներ եւ պաղեստինցի նկարիչ մը վիրաւորուեցան Երկուշաբթի օր, երբ իսրայէլացի զինուոր մը կրակ բացաւ անոնց ուղղութեամբ: Դէպքը պատահեցաւ, երբ պաղեստինցի եւ օտար մօտ 100 ցուցարարներ բողոքի արշաւ մը կը կատարէին Այսրյորդանանի Պէյթ Փալաքաքին մէջ, «խաղաղութիւն կ'ուզենք. ո՛չ պատերազմին» կոչներով: Մինչ անոնք կը մօտենային իսրայէլեան զինուորական փոխադրակառքի մը, իսրայէլացի զինուոր մը դէպի գետին կրակ բացաւ անոնց ուղղութեամբ:

Պաղեստինեան բժշկական աղբիւրներ յայտնեցին, որ վիրաւորուած 7 օտարահպատակներու շարքին են երկու ամերիկացիներ, երկու բրիտանացիներ, աստորայիացի մը, ֆրանսացի մը եւ ճափոնցի մը: Վիրաւորուած պաղեստինցին «Ասոշիէյթըտ Փրես» գործակալութեան համար կը նկարահանէր քայլարշաւը: Իսրայէլացի զինուոր մը հարուածեց նաեւ «Ռոյթթըրը» Նկարիչը, որ նշեալ գործակալութեան համար կը նկարէր բողոքի ցոյցը, չվիրաւորուեցաւ: «Ռոյթթըրը» այս գծով բողոք ներկայացուց իսրայէլեան բանակին:

Պէյթ Փալաքին հիւանդանոցին տնօրէնը՝ Փիթըր Գուլմի յայտնեց, որ կին մը վիրաւորական գործողութեան կ'ենթարկուի անոր մարմնէն դուրս բերելու համար փամփուշտի կտորներ:

Պէյթ Փալաքին ակնատես, մու, որ ինքզինք միայն իբրեւ Ֆուստ ներկայացուց, ըսաւ. «Մենք պարզապէս կը տողանցէինք հրասայլերուն մօտէն, երբ հետուէն սկսան իսկական փամփուշտով կրակ բանալ մեր ուղղութեամբ, Իսրայէլեան բանակը յայտնեց, որ քննութիւն բացած է դէպքին շուրջ: Բանակը նաեւ արգիլած էր մօտ 50 օտարահպատակներ, մեծամասնութեամբ իտալացիներ, Ռամալլա մուտք գործելէ: Անոնք պիտի ուղղուէին Եսսէր Արաֆատի կեդրոնատեղին՝ միանալու համար հոն գտնուող օտարահպատակներուն:

Կամայական իր միջոցառումներու շարքին, իսրայէլեան բանակը շաբաթավերջին անվաւեր նկատեց «Ալլու Տալի» հեռուեստիլի կայանի երկու թղթակիցներուն արտօնագիրները եւ սպանաց գետակահեռուայնուրմ կատարել «Սի. ԷՃ. ԷՃ.» եւ «Պի. Սի.» կայաններուն դէմ՝ Ռամալլային սփռուող հաղորդումները կասեցնելու բանակի հրահանգներուն չենթարկուելու համար:

Իսրայէլեան կառավարութեան մամուլը գրասենեակը հաղորդագրութեամբ մը յայտնեց, թէ թղթակիցները Լէյլա Աուտէի եւ Պասամ Ազաուէի թղթակիցի արտօնագիրները ջնջուած են, որովհետեւ «Ալլու Տալի» կայանը Մարտ 31ին սփռած է հաղորդում մը, ուր կ'ըսուի, թէ իսրայէլեան բանակը մասնապատիժի ենթարկած է խումը մը երիտասարդ պաղեստինցիներ: «Արբանեակային կայանի աշխատակիցները որոշատենէ ի վեր հակաիսրայէլեան բռնա քարոզչութիւն կը կատարեն օգտագործելով պատերազմական ոճ եւ տրամադրութիւն, ինչ որ ղեգահանք կը բարձրացնէ արաբական աշխարհին մէջը», նշած էր հաղորդագրութիւնը, աւելցնելով, որ կայանը «բացարձակ անտեսում» կը ցուցաբերէ իսրայէլեան զինուորական գրաքննութեան օրէնքներուն հանդէպ:

Պաղեստինցիները կ'ըսեն, որ 22 պաղեստինցի ոստիկաններ, երբ դուրս եկած են իրենց ապաստանարաններէն՝ յանձնուելու համար զիրենք պաշարող իսրայէլացիներուն, իսրայէլացի զինուորները կրակած են սպանած են 5 ոստիկան: Իսրայէլացիները կ'ըսեն, թէ երկու կողմերէն հրացանաձգութիւն տեղի ունեցած էր:

Միւս կողմէ, նոյնանման հաղորդագրութեամբ մը իսրայէլեան կառավարութիւնը տեղեկացուց, որ գրաւոր բողոք ներկայացուցած է «Սի. ԷՃ. ԷՃ.» եւ «ԷՃ. Պի. Սի.» կայաններուն, որոնց թղթակիցները շարունակած են հաղորդումներ կատարել Ռամալլային, հակառակ անոր որ բանակը Ռամալլան «զինուորական փակ շրջան» յայտարարած է:

«Եթէ անոնք շարունակեն ոտնակոխել իսրայէլեան օրէնքը, իսրայէլի պետութիւնը պիտի ստիպուի դիմել օրէնքի պարտադրած քայլերուն», ըսաւ իսրայէլեան հաղորդագրութիւնը:

Նիւ Եորքի մէջ, Լրագրողներու Պաշտպանութեան Կոմիտէն իսրայէլի վարչապետ Արիէլ Շարոնի յղեց բողոքի նամակ մը, ուր նշեց, թէ իսրայէլ պարտաւոր է արտօնել լրագրողներուն ազատօրէն գործել Այսրյորդանանի մէջ:

Իր կարգին, Պրեքսէյլի մէջ հաստատուած Լրագրողներու Միջազգային Համադաշնակցութիւնը քննադատեց իսրայէլը որոշ շրջաններ լրագրողներու մուտքը արգիլելուն համար: «Գրաքննութիւնը խաղաղութիւն պիտի չբերէ, այլ՝ միայն ստիպութիւն տարածանութիւն եւ սարսափ», հաստատեց Լ. Մ. Համադաշնակցութիւնը:

«ՌՈՅԹԸՐԸ», «ԱՍՈՇԻԷՅԹԸՏ ՓՐԵՍ»

ԲԱՅՈՒՄԱՐ

Օրը օր աւելի մտահոգիչ դարձնող Միջին Արեւելքի քաղաքական վերջին զարգացումներուն վրայ յաւելեալ լոյս ստիպու համար, բացառաբար, Եայ Դասիկ այսօրուան էջը կը փոխարինենք միջազգային քաղաքական էջով եւ զայն կը յստակացնէք պաղեստինցիներու դէմ իսրայէլի շղթայազերծած արիւնակի պատերազմին:

«Ա.»

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՅՈՅ
ՀԱՍՏԱՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ՄԵՌՈՒԹԻՒՆ (ՀԵՀՈՍ)

ԴԱՍԱՆՕՍՈՒԹԻՒՆ

«The Mechanics of Motion Picture Industry»

Կը ներկայացնէ՝
ՊՐՆ. ՆԻԿՈԼ ՊԵՂՃԵԱՆ
(Բեմադրիչ եւ Future պատկերասփիւռի կայանի ֆիլմերու ցուցադրութեան բաժնի տնօրէն)

Տեղի կ'ունենայ Չարաթ, 6 Ապրիլ 2002ի երեկոյեան ժամը 6:30ին, ՀԵՀՈՍի կեդրոնատեղիին մէջ, Կաթողիկոսարան, Աթիլիա:

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՏԵՆ

HAMPIG SASSOUNIAN
CSP - L.A.C. B - 5 - 131 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536 — USA

7րդ Արուեստ



ԲԵՄԱՀԱՐԹԱԿԻ ԵՒ ՄԵԾ ՊԱՍՏԱՌԻ ՄԻՋԵՒ

Թատերական-ցած երաժշտական ներկայացումները վարժուած եւ վիտեո-քլիփներով մեծ յաջողութիւններ արձանագրած փոփ երգիչները իրենց համար դերասանութիւնը կրնայ այդքան ալ դիւրին ասպարէզ մը չլայ: Այս կը վկայեն վերջին շրջանին երգարուեստի աստղերու ժապաւէտներուն ձայնագրութիւնները:

Մշտնի Մուրի «Է ուղը թու ռիմեյքը» եւ Ալիս Եազի «Բուրն աֆ տը տէմնտ» (վերջինին աստղը 2001ի Օգոստոսին զոհ գնաց օդանաւի ար-իրենց հանդիսատեսներուն մեծ բազմութեան եւ ծախսալից ծանուցումներուն արշաւին, չեն յաջողած արահովել եւ կամ պահել տոմսակներու վաճառքի առաջնակարգ դիրքերը: Նոյնը կարելի է ըսել «Օն տը լայն» ժապաւէտին համար, որ մեծ պատահաբար ընդունուած ժողովրդականութիւն վայելած է:

«Հարժապատկերի դէմ ոճի» չլուսահատեցուց փոփ աստղերուն ժողովրդականութեան միջոցով մեծ շահեր ապահովելու ձգտող արտադրիչները: Չլուսահատեցուցաւ նաեւ երգչուհին, որ իր դերասանական փորձերը պիտի շարունակէ «Ուայզ կըրըզ» եւ «Սուրիթ սայընս» ժապաւէտներով:



Մեծի Մուրի՝ «Է ուղը թու ռիմեյքը»ի մէջ

փնտռեն եկամտուի այլ աղբիւրներ: «Ժամանակակից արուեստագէտները վարժ են վիտեո-քլիփներու մէջ ելոյթներ ունենալու: Այսօրուան երգիչին ասպարէզը աւելի քան երբեք դարձած է տեսողական», կ'ըսէ «Ռեզորտինկ Ինտասթրի Էստիէյշն» աֆ Ամերիկան Նախագահ՝ Հիլըրի Ռոսըն: Ան այս իրողութեան կը վերագրէ երգիչներուն դերասանական ասպարէզ դիւրին անցումը: «Իրենց ասպարէզին ամբողջ տեսողութեան երգիչները ի մտի ունին դերասանութիւնը: Եւ երբ առիթ ներկայանայ, անմիջապէս կ'օգտագործեն զայն», կ'ըսէ ան: Ինչ կը վերաբերի ժապաւէտներուն յաջողութեան կամ ձախողութեան, Հ. Ռոսընի համաձայն՝ աստղ

առանձինն պատասխանատու չէ տոմսակներու վաճառքի ցուցակին մէջ ժապաւէտին արձանագրած դիրքին: «Այդ չինչանակեք, թէ անոնք տաղանդ չունին կամ սխալ քայլի դիմած են», կ'աւելցնէ ան:

Դերասանական ասպարէզը երգիչներուն համար դարձած է ապագային անգործութենէ խուսափելու միջոց, իսկ փոփ աստղերով ժապաւէտներու արտադրիչներուն համար՝ բախտաւար: Անոնցմէ ոմանք սկսած են անդրադառնալ, թէ մարզի մը մէջ արդէ իսկ հոշակաւոր աստղեր, երբ այլ մարզ մը «փոխադրուին», պայման չէ որ անոնց երկընկրտները մեծ գանգըլածներով հետեւին իրենց:



Պրիթնի Սփիրզ՝ «Քրոստոս»ի մէջ

աստղերէն Ալիս Եազի, Անցեալ տարի փոփ Պրիթնի Սփիրզ եւ Մէնսի Մուր: Ժապաւէտները ունին նաեւ հասարակաց այլ կէտ մը: Պրիթնի Սփիրզի «Քրոստոս»ը,

Անցեալ տարի փոփ երգչուհի Մուրի «Է ուղը թու ռիմեյքը» ժապաւէտին ձայնագրութիւնը (շարժապատկերի քննադատ մը նոյնիսկ զայն որակեց

ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ԺԱՊԱԻԿՆԵՐ

Հայկական շարժապատկերի աշխարհին իրագործումները են Ուրուիւնները ներկայացնելու մեր անդրադարձներուն մէջ պիտի փորձենք զանոնք չբաղդատել արեւմտեան եւ յատկապէս ամերիկեան արտադրութիւններու հետ, այլ՝ անոց մօտեցնալ իրեն հայկական շարժապատկերի արուեստը ճիշտացնող եւ հետագայի միջազգային չափանիշներով իրագործումներու ձամբայ բացող գործեր:



Պարոնուհի Էարոլայն Էնջու

Վերջին ամիսներուն պատրաստութեան ընթացքի մէջ են կամ արդէն պատրաստուած են վաւերագրական շարժապատկերներ, որոնցմէ կ'արժէ նշել քանի մը հատը: Այսպէս, արդէն իսկ աւարտած է «Լէյտի Բոքս» գեղարուեստական շարժապատկերները՝ պատրաստուած «Երեւան Ծարժապատկերի Սթիւտիո»ին կողմէ: Տիրաւոր Իւզմարտեանի, Ժիրայր Աւետիսեանի եւ Ռենալ Միրզոյեանի ընթացած այս ժապաւէտը հանգամանորէն կը ներկայացնէ 1991-2001 տարիներուն պարտուհի Քարոլայն Բոքսի հայանպաստ գործունէութիւնը:

Պատրաստութեան ընթացքի մէջ եղող վաւերագրական ժապաւէտներէն նշենք Հայաստանի վաստակաւոր բեմադրիչներէն խորհն Արարհամեանի խոր վիրապի նուիրուած ժապաւէտը:

Հետաքրքրական այլ պատրաստութիւն մը կը թըլի Քրոնապիլի բեմադրիչ Մաթիէ Ժարտէնի վաւերագրական վերջին ժապաւէտը, որ նուիրուած է Գիւմրիի: Արդէն իսկ նկարահանուած են քաղաքին պատկերները, առօրեան, պատմական յուշարձանները, ինչպէս նաեւ՝ Արփա լիճն ու Ամասիոյ կիկլոպեան ամրոցը: Կը ծրագրուի այս ժապաւէտը հրատարակել մինչեւ 2002ի աւարտը: Մաթիէ Ժարտէն նախապէս բեմադրած է Հայաստանի պատմամշակութային արժէքներուն նուիրուած վաւերագրական այլ ժապաւէտ մը:

Ինչ կը վերաբերի գեղարուեստական ժապաւէտներուն, իրականացնող ծրագիր է «Ճանապարհ» ժապաւէտը, որ պիտի արտադրուի հայ-պրագիլական համագործակցութեամբ: Բեմադրութիւնը ստանձնած է Ռուբէն Քոչար, իսկ ժապաւէտին մէջ դերեր պիտի ստանձնեն հայ եւ օտար դերասաններ: Պրագիլի մէջ նկարահանուող այս ժապաւէտը կ'արձարծէ աշխարհի տարածքին գաղթի եւ յատկապէս հայերու արտագաղթին նիւթը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՍՐԱՀՆԵՐԷՆ ՆԵՐՍ

Երկրորդական վարժարանի գեղեցկուհի ընտրապայքար, գեղեցիկ եւ հպարտ աշակերտներ, գեղեցիկ եւ շարժապատկերներու կողմէ լուսանցքի վրայ ձգուած կեղծ տգեղութեամբ խելացի աշակերտուհիներ, ամէն գնով հակառակ սեռին ուշադրութիւնը գրաւել փորձող պատանիներ, ուսուցչուհիներու հետ հարցեր... Անշուշտ ձեր միտքէն անցան պատանիներու յատուկ հոլովուտեան վիպային գանազան կատակերգութիւններ: Այս եւ տակաւին ամերիկացի պատանիներու բազմաթիւ այլ կերպարներ միացած են այս ձեւի տարբեր ժապաւէտներէ ներշնչուած տեսարաններով՝ պատրաստելու համար «Մեթ ընտորը թիւն մուլի» ժապաւէտը (բեմադրիչ՝ Ճոէլ Կալէն), զոր աւելի ճիշդ պիտի ըլլար անուանել «Լաք Էլրի տորը թիւն մուլի»:



Տեսարան մը «Նաթ ընտորը թիւն մուլի»էն

Այս շարժուող սկսեալ լիբանանեան սրահներէն ներս ցուցադրուող «Նաթ ընտորը թիւն մուլի»ին նիւթը հետեւեալն է. Ճէնի Պրիկզ՝ տղեղ ակնոցով եւ ներկէն աղտոտած տաբատով գեղեցիկ արուեստագիտուհի մը, իր արտաքինին պատճառով մեկուսացուած է իր դասընկերներէն: Ճէյթ Ֆուլթոնի դպրոցական աստղ մը, զբաւի կու գայ Ճէյնի գեղեցկուհի վերածելու համար: Ի՛նչ կը պատահի ժապաւէտին ընթացքին. շատ պարզ է: Յիշեցէք ձեր դիտած պատանիներու յատուկ բոլոր ժապաւէտները:

«Նաթ ընտորը թիւն մուլի»ի եւ «Ռի ուրը սոյնըր»ի կողքին նաեւ կը ցուցադրուի Ֆրանսական «Սիւր մէ լեվը» տրամը, որուն գլխաւոր հերոսուհին

Էմանուէլ Տեյօ, պարզեւտուրուեցաւ լաւագոյն դերասանուհի «Սեպտ»ով: Ժապաւէտը ցոյց կու տայ, թէ կէս խուճարտուողուհի մը եւ բանտէն արձակուած գող մը (Վենսան Քասէլ) ինչպէս իրար օգտագործելէ ետք կրնան իրարու համար կենսական իմաստ ունենալ:

Տակաւին կը շարունակուի ցուցադրութիւնը «Սիւր կէյմը», «Պէլէ հոք տառու», «Մալեան», «Է պիւրիֆոն լայֆ» ժապաւէտներուն, ինչպէս նաեւ «Քէյթ Էն Լէֆոլլ» եւ «Սերենտինիթի» վիպային կատակերգութիւններուն:

ՄԵՐ ԿԱՐԾԻՔԸ


- ՌԻՒ ՌԻՒ ՍՈՒՆԸՐԸ» (Փալմէր/Ապրամ, Չուր, Ֆրիուէյ Սթրիթ)
- ՆՍԹ ԸՆՍԸՐԸ ԹՆ ՍՈՒՎԻ» (Եսփաս, Ամփիթ / Տիւն, Սոֆիլ, Սոսթո, Կալաքսի, Սթալլէ 2001, Լա Սալիմաս)
- ՍԻՒՒ ՄԵ ԼԵՎԻ» (Փալմէր/Ապրամ, Ընթրոտ, Ֆրիուէյ, Էսալիք)
- «ՍՓՅ ԿԵՅՅՅ» (Փալմէր/Ապրամ, Չուր, Ընթրոտ, Ֆրիուէյ, Էսալիք)
- «ԵՅՅ ԵՆ ԼԵՎՈՒՆՏ» (Եսփաս, Ամփիթ/Տիւն, Սոսթո, ՍԵՅ Էլի, Սթալլէ 2001, Կալաքսի, Լա Սալիմաս)
- «ԵՅՅ ԳԵՅՅ» (Եսփաս, Ամփիթ, Սոսթո, Էլիք, Սթալլէ 2001)
- «ՍՅՅ ԵՅՅ» (Եսփաս, Ամփիթ/Տիւն, Սոսթո, ՍԵՅ Էլի, Կալաքսի, Սոֆիլ, Սոսթո, ՍԵՅ Էլի, Կալաքսի)

●●●Գերագանց ●●●Ճատ կա ●●●Լա ●●Միջակ ●Չեն յանձնարարեր □Չեն դիտած

Շաբթուան Ժապաւէտը

«ՌԻՒ ՌԻՒ ՍՈՒՆԸՐԸ»ՈՎ ԴԱՐՁԵԱԼ ՄԵԾ ՊԱՍՏԱՌԻ ԿԸ ԲԱՐՁՐԱՆԱՅ «ՀԱՅՐԵՆԱՍԻՐ ՀԵՐՈՍԸ»

1965 թ. նոյեմբերին, 400 ամերիկացի զինուորներ վիեթնամի եւ Տրանկ Հովիտը կը զրկուին յատուկ առաքելութեամբ մը. գտնել եւ սպաննել թշնամի: Գրեթէ անմիջապէս անոնք կը պաշարուին հիւսիսային վիեթնամի 2000 գիւմուրներու կողմէ:



«Հայրենասիր շերտ»՝ ՍԵԼ Կիպսըն:

«Փըրլ Զարպըր»ի բեմադրիչ Ռեյնոլդ Ուէյլըսի նորագոյն ժապաւէտը՝ «Ռի ուրը սոյնըրը», հիմնուած է գնդապետ Հէրբըտ Մուրի եւ լրագրող Ճոզէլ Կէլուէյի «Ռի ուրը սոյնըրը ուսան... Էնտ եսկը. Ես Տրանկ. տը պէթըլ տէք չէյնց տը ուր ին վիեթնամ» («Ժամանակակից երիտասարդ զինուորներ էինք. Ես Տրանկ՝ կոլիւր, որ փոխեց վիեթնամի պատերազմին ընթացքը») յուշագրութեան վրայ: Ժապաւէտին գլխաւոր հերոսներն են հեղինակները, որոնց դերերը յաջորդաբար ստանձնած են Մէլ Կիպսըն եւ Պերի Փեփըր: Անոնց կ'ընկերակցան Մեթ Սթոու (Մուրի կնիքը կերով), Սեմ Էլիքս, Կրեյկ Քիլըր, Քրիս Քլէյն եւ Քերի Ռասըլ:

«Պէլէ հոք տառու»ի նման այս ժապաւէտին մէջ եւս զինուորներու օգնական դերեր ստանձնած են իսկական կոլիւր մասնակցողներն ոմանք: Այս բոլորին կողքին սակայն ժապաւէտին յաջողութեան հիմնական ազդակը կը հանդիսանայ «Պրէյվիարթ»ով եւ «Տը փէթրիթ»ով արդէն իսկ «հայրենասիր հերոս»ի դերը իրացուցած Մէլ Կիպսըն:

Քաջուրիւնը, վախը, յուսահատութիւնը, թշնամիին հանդէպ յարգանքը եւ գայրոյթը նորը գագցուցներու մէջ համադրող, ինչպէս նաեւ մարդկայնութիւնը ու հերոսութիւնը տրամաբանական սահմաններու մէջ պահող կերպար մըն է Հ. Մուրի տիպարը. դեր մը, որուն վարպետը դարձած է այլեւս Մէլ Կիպսըն:

Միջ կարելի է «Ռի ուրը սոյնըրը»ը նկատել «դժոխային պատերազմ»ի դասականացած ժապաւէտներէն մէկը, զայն յատկապէս հետաքրքրական դարձնող կէտը այն է, որ Ես Տրանկի կոլիւր հիւսիսային վիեթնամի զինուորներուն սորվեցուց ամերիկացիներուն կողմէն ոնը. բան մը, որ անոնք օգտագործեցին պատերազմի ամբողջ տեսողութեան: Միւս կողմէ, ժապաւէտը կը շեշտէ, որ Մուրի զինուորներուն գոհողութեան վարձատրութիւնը անոց հերոսացումն է: Կայ նաեւ վիեթնամի պատերազմը յղացողները անոր բիրտ իրակացութիւնը ապրողներէն (նկատի ունի թշնամի երկու կողմերուն զինուորները) գորաւոր կերպով գատորոշելու առաջարկում մը:

«Ռի ուրը սոյնըրը» միաժամանակ ցոյց կու տայ մետալիկ երկրորդ կողմը՝ զինուորներուն ընտանիքները: Մուրի կիներ Ճիւլիան, ինչպէս կ'ակնկալուի նման հերոսի մը կնոջմէն, ընտանեկան «նակատի» վրայ կ'առաջնորդէ կոլիւր գօտեպնդելով մնացեալ զինուորներուն կիները: Ժապաւէտին մէջ անցնող շաբաթուան ընթացքում կ'ընդհատուի կնոջ մը շափանիշներով եւ վերածուած է խորհրդանշանի:

«Ռի ուրը սոյնըրը» հարազատութեամբ ներկայացնելով հանդերձ «Մահուան հովիտը» անունով վերամկրտուած Ես Տրանկ հովիտին կոլիւր, կը միանայ վիեթնամի պատերազմին ներշնչուած ամերիկեան քարոզչական մեքենային տասնեակներով պատրաստած պատերազմական տրամաբանութեան վաղաճից: Կարելի է ըսել, որ ժապաւէտը իր նմաններէն կը գատորոշուի անով, որ շատ աւելի յստակ եւ գորաւոր կերպով կը հաղորդէ այն գաղափարը, որ թէ՛ վիեթնամի մէջ կոլուորները եւ թէ՛ տունը «գագացական պայքար» մղողները պարզապէս հերոսներ էին: Բայց արդեօք ան կը պատասխանէ՞ Հ. Մուրի աղջնակին «Հայրիկ, ի՞նչ է պատերազմը» հարցումին:

Պատրաստեց՝ Պ. ՓԱՆՈՍԵԱՆ

Ռայ Սիրուպուգլյաներ ՎԱՆ ԼԵՕ

ԵԳԻՊՏԱԿԱՅ ԱՆՈՒԱՆԻ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ ՎԱՆ ԼԵՕ, ԲՈՒՆ ԱՆՈՒՆՈՎ՝ ԼԵՒՈՆ ՊՈՅԱՃԵԱՆ ՍԱԿԱՅԱԻ 18 ՄԱՐՏԻՆ, 80 ՏԱՐԵԿԱՆԻՆ: ԱՆ ԼԿԱՐԱԾ Է ԵԳԻՊՏՈՍԻ ԸԱՄԵՍ ԵՒ ՎԵՐՆԱԽԱԻ ՄԱՐԴԻԿԸ՝ ԱՆՈՆՑ ՏԱԼՈՎ ԸՈԼԻՎՈՒՏԵԱՆ ԱՍՏԴԵՐՈՒ ՏԵՍԷ: ՍՏՈՐԻԷ ՆԱՅՃՈԼ ՈԱՅՈՆԻ ՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԸ, ՈՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԾ Է «ԱԼ ԱՐԱՍ» ԶԱԲԱԹԱԹԵՐԹԻՆ ՄԷՋ



Վան Լեո. ինքնանկար (1945):

Գահիրէ 1935էն 1945 եւ մինչեւ 1952, նոյնիսկ քիչ մը աւելի ուշ, լաւ հերկուած դաշտ մըն է: Ենթադրաբար նուամենայն, կրնան գարմանալի, նոյնիսկ յուսահատական կեբազով պատահական թուելի, երբ աղբիւրը մեծ ասամբ տուեալ ժամանակաշրջանի մը մանրամասններն են, որոնք երբեմն անգլիերէնով հրատարակուած են վերջինի մեկու տասնամեակներուն: Գահիրէ ձեռով երթառանգած է միջազգային քաղաքի մը դրուագները, որոնք համայն են Աղեքսանդրիոյ աւելի կանուխ ժամանակներու պատմագիրները: Անոնք կը պատմեն հաւաքովիներու, խրախմբանքներու եւ գլխապտոյտ պատճառող գեղեցկութեամբ կիրներու մասին, որոնք ծփուն շրջագոյններով եւ աղամաններով, անվերջ գիշերներ կ'անցընէին այնպիսի պաղարիւնութեամբ, որ աներեւակայելի էր կեղծ աղամանդ կրող կիրներու համար, կամ զէթ աղապէս կը թուի այսօր: Ասիկա անշուշտ ճշմարտութիւնը չէ եւ վստահարար՝ ոչ լրացարձակ ճշմարտութիւնը: Սակայն ինչ փոյթ: Յաճախ որոշ պատկերներ կը կազմուին եւ անոնցմէ ոմանք անջնջելի մնան:

Քիչեր Լեոն Պոյաճեանի չափ դեր ունեցած են նման պատկերներ ստեղծելու մէջ: 1947ին ան լուսանկարչատուն մը բացաւ Ֆուադ փողոցին մէջ, որ այժմ կը կոչուի 26 Յուլիս փողոց, ուր աշխատեցաւ աւելի քան կէս դար: Հոն է որ ծնած է Վան Լէօ: 1941էն սկսեալ, մինչեւ իր սեփական լուսանկարչատունը հաստատելը, ան կ'աշխատէր երթօրը հետ, եւ անոնք միասնաբար կը ստորագրէին իրենց լուսանկարները: Նախ Սթիւտտոի Մեթրօ, ապա՝ Սթիւտտօ Անճելօ:

Այդ ժամանակ լուսանկարչութիւնը հայերու մենաշնորհն էր Եգիպտոսի մէջ: Առաջին լուսանկարչատունը կը պատկանէր Լեքէկեանի եւ կը գտնուէր «Շեֆրուտ» պանդոկին մօտ: Վայրը յարմար էր եւ գործը՝ շահաբեր: Շուտով ուրիշներ պիտի փորձէին անուն մը կերտել լուսանկարչութեան ընդարձակուող շուկային մէջ: Արման, Արշակ, Վարդան, Ալպան, բոլորն ալ լուսանկարչատուններ հաստատեցին Քասր Ալ Նիլ փողոցին եւ Օփերայի հրապարակին միջեւ, թէեւ Վան Լէոյի լուսանկարչատունը սկիզբէն տարրեր բնոյթ մը կրէր: Անոր ընդունարանը ձեւագծած էր գեղանկարչ Անճելօ տը Ռից, որ եգիպտացի գերիրապաշտ արուեստագէտներու «Ար Է Լիպերթե» միութեան հիմնադիրն էր: Լուսանկարչատունը արդիական էր, գործնական եւ նուազապատշաճ, թէեւ աւելի քան թատերական վերէն կախուած քիչ մը անյարմար շագանակագոյն թաւշեայ վարագոյրներով: Գերարդիական եւ զեղազիտական մաքուր ձեւագծումով այս վայրը բեմի եւ թատրոնի իր տարօրինակ համադրով յաճախողներուն կը գոռուչացնէր, թէ ինչ որ տեղի կ'ունենար լուսանկարչատան մէջ այնքան ալ բացայայտ չէր, ինչպէս կը կարծէին:

Վան Լէօ իր լուսանկարչատունը բանալին 3 տարի ետք ստեղծած էր այնպիսի հետաքրքրութիւն մը, որ արտասովոր էր լուսանկարչի մը համար: «Ժէ Տի» թերթին մէջ լոյս տեսած «Սիւրեալիզմ տե լ'Էսփրի» վերնագիրով յօդուածի մը մէջ Ժաք Օվատիա վայն նկարագրած է իրեր «փայլուն ժպիտով եւ կենսունակ աչքերով մարդ մը, զոր կը տեսնենք լուսանկարներու վրայ հակած կամ դիմանկար մը քննելու դիրքով, ոգեկոչելու համար այն ուրազականները, որոնք կը բնակին ամէնէն գեղեցիկ երազներուն մէջ»:

Սակայն Վան Լէոյի արուեստը կարելի չէ բնորոշել «Ար Է Լիպերթե»ի հետ անոր կապով: Իսկ Օվատիայի յօդուածին մէջ նկարագրուած լուսանկարները կը պատկանին միայն 1940ական տարիներուն, այն Վան Լէոյին, որ իր գլուխը ածիւած է իրարու վրայ բարդուած եւ լոյսի ճառագայթներով անվերջ բեկեղեկուող շարք մը ինքնանկարներու համար: Անոնք կը պատկերեն անձ մը, որ չափազանց պարզ արտաքին տեսք մը ուղեղրած է, չքեղ երեւելու համար, որ ածիւած է իր գլու-

խը աւելի լաւ ցոյց տալու համար այն, ինչ որ չէ՛ ինք: Վան Լէօ երբեմնի գերիրապաշտը կը կրէ այս յատկանիշը, ո՛չ աւելին. անիկա կ'առնչուի իրերու հետ, թատերական հագուստներու սնտուկին հետ, ոչ միայն տարօրինակ երեւելու համար, այլ նաեւ՝ անբնական:

Լեոն Պոյաճեան Գահիրէ հասած է իր ծնողներուն հետ, Ա. Աշխարհամարտէն ետք: Ան մաս կը կազմէր օսմանեան փուլուող պետութեան խորքէն խոյս տուող հայերու գաղթականական հոսանքին: Առաջին անգամ լուսանկարչական գործիք տեսած է 1928ին կամ 1929ին, Զակարիի մէջ, ուր հայ լուսանկարիչ մը կը նկարէր նոր հասած հայ ընտանիք մը: Տարիներ ետք նոյն լուսանկարիչը Լեոնին մասին պիտի բարեխօսէր Քասր Ալ Նիլ փողոցին վրայ գտնուող Սթիւտտօ Վենիսի, որուն քով Լեոն, Գահիրէի Ամերիկեան համալսարանին մէջ դժգոհ ուսանող մը, սորված է իր արհեստը:

Իրերէ արհեստավարժ լուսանկարիչ Վան Լէոյի առաջին որոնումները տեղի պիտի ունենային Գահիրէի մէջ, որուն ընակչութիւնը բազմապատկուած էր ոչ միայն Բ. Աշխարհամարտի օրերուն ըզկտուած Եւրոպային խոյս տուած գաղթականներու հոսքով, այլ նաեւ Բրիտանական կայսրութեան գանազան անկիւններէն հազարաւոր գինուորներու ներկայութեամբ, որոնք 1940ին մաս կը կազմէին երկրին անխուսափելի պատկերին: Եւրոպայ պատերազմի մէջ էր: Սակայն Գահիրէի մէջ ոմանց գործը կը ծաղկէր: Բրիտանացի գինուորներուն ներկայութիւնը ծնունդ կու տար գիշերային զբօսավայրերու, ժողովրդային թատրոններու, պարաֆուլմերու, շատերը՝ ոչ այնքան համեստ, եւ այս բոլորը կը կազմէին հաճելի ժամանց պարգեւներու ամբողջ ընկերութիւն մը, որ պատերազմի օրերուն կարճ հանգիստ կը վաճառէր: Անոնք կարիք ունէին ծանուցելու, եւ Պոյաճեան եղբայրները ձրի լուսանկարներ կը տրամադրէին յայտագիրներու մէջ իրենց լուսանկարչատան ծանուցումին փոխարէն: Փոխազարձակ շահի վրայ հիմնուած կարգադրութիւն մը, որ Պո-

յաճեաններուն դռները կը հասցնէր հանդիսատեսները, մեծ մասամբ՝ յուշանուէրներ փնտռող գինուորներ, որոնք սովորաբար իրենց ինքնանկարները կ'ապսպրէին:

Երբ Վան Լէօ փոխադրուեցաւ Ֆուադ փողոց, արդէն հուշակաւոր էր իրերէ դիմանկարիչ, եւ անոր յաճախողները կու գային տարբեր խաւերէ՝ գիշերային գրօսավայրերու մէջ աշխատողներու, բրիտանացի քաղաքային ծառայողներու եւ գինուորներու կողքին անոր լուսանկարչատունը կ'այցելէին աւելի պատկառելի յաճախողներ, ինչպէս՝ Օմար Շէրիֆ, զոր Վան Լէօ առաջին անգամ լուսանկարած է 1950ին: Անոնց շարքին էին նաեւ Ֆաթմա Ռուշտիի նման արդէն իրենց դիրքը հաստատած աստղեր: 1950ին էր, որ Վան Լէօ լուսանկարած է Թահա Հիւսէյնը, որուն դիմանկարը անոր ամէնէն ծանօթ գործն է եւ այժմ արդէն կուռքի վերածուած է:

«Պէտք է տասը տարին անգամ մը լուսանկարուիս, - բաւ Վան Լէօ, երբ 1995ին այցելեցի անոր լուսանկարչատունը, - գէթ գիտնալու համար, թէ ինչ տեսք ունէիր»:

Այդ ժամանակ ըսածը ընդունեցի իրերէ յատկանշական սրամտութիւնը մարդու մը, որուն լուսանկարները նոյնիսկ չեն փորձեր ցոյց տալ տեսքը:

Աւելի քան կէս դար Վան Լէօ հակած է իր լուսանկարներուն նեկեթիվներուն վրայ: Ան միշտ կը գործածէր ամէնէն լայն ֆիլմերը եւ կը վերստեղծէր լուսանկարչական ուսանելիքն ընդմէջէն անցած պատկերները: Կը ջնջեր այն գիշերը, զորս կը սիրեր, կը շեշտէր շուքերը, կը յօտէր տպագրութիւնը, երբեմն կ'անհետացնէր մարմնի գանազան մասերը եւ գանոնք կը յանձնէր մոռացութեան:

Վան Լէոյի դիմաց լուսանկարուելու նստիլը քիչ մը ջղագրգռութիւն կրնար պատճառել: 1995ին անոր լուսանկարչատան գերարդիական ընդունարանը ստացած էր տախտակէ նրբագեղ բայց հնամենի տարածքի երեւոյթ: Վան Լէօ անմիջապէս ցոյց կու տար տպագրութիւններու անվերջանալի շարք մը, յաճախողին մէջ արթնցնելու համար «այն զգացողութիւնը, թէ ինչ կարելի է ընել»:

Անոր լուսանկարներու հաւաքածոն տարօրինակ էր: Ակներեւ էր, որ իւրաքանչիւր լուսանկար յատկապէս ձեւուած էր այն անձին համար, որ դիմանկար

մը կ'ուզէր ունենալ: Ընտրեցի լուսանկար մը, որ նաեւ Վան Լէոյի նախասիրածն էր. հարաւային ափրիկեցի պարող Թէտի Լէյնի դիմանկարը, լուսանկարուած՝ 1944ին: Լէյնի դէմքը ծեփուած էր օժանելիքով, ապա աւազ ցանուած էր անոր վրայ: Անոր մարմինը դրուած էր թաւշեայ սեւ տպագրակի մէջ, եւ միայն գլուխը կ'երեւէր շուքերու ընդմէջէն: Հաւաքածոյին ընտրանիին մաս կը կազմէին նաեւ լուսանկարներ Լեիտիփոլիսէ կնոջ մը, որ օր մը Վան Լէոյի քով հասած էր 18 տեսակի հագուստներով, եւ պահանջած էր 18 լուսանկար: Ան իւրաքանչիւր լուսանկարի համար հանած էր հագուստ մը, մինչեւ որ մեկնեցաւ էր: Այլ լուսանկարներու մէջ Տորիա Շաֆիք կը ժպտէր վայրագօրէն փետուած յօնքերու տակ եւ Մոհամէտ Ապտէլ Ուահապ՝ անյարմար կեղծամի մը տակ, զոր նոյնիսկ Վան Լէօ չէր կրցած բարելաւել: Եուսէֆ Սեպայ կը պատմէ, թէ 1953ին չորս հագուստ տարած է Վան Լէոյի լուսանկարչատունը. ան փոխած է իր հագուստները տարբեր նկարներ ունենալու

Շար.ը՝ էջ 8

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԻ «ՔՐՄՈՒՀԻՆ»

ԲՐԻՏԱՆԱԿԱՅ ՏԱՂԱՂԱՒՈՐ ՊԱՐՈՒՇԻ ԶԱՔԷ ԱԲԱՆԵՍԵԱՆ ԱԲՍՏՐԻԱԿԱՆ ԸԻՄՆԱՐԿԻ ՄԸ ՄԷՋ ԿԸ ՂԵՄԱԽՈՐԷ ԸԱՅԿԱԿԱՆ ՊԱՐԻ ԴԱՍԸՆԹԵՍԵ ՄԸ, ՈՐՈՒՆ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՆՈՅԹՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ ԿԸ ՏԵՂԵԿԱՅՆԷ «ԱՁՂԱԿ»ԻՆ ՈՒՂՈՒԱԾ ՆԱՄԱԿԻ ՄԸ ՄԷՋ

Շաքէ Աւանգեսեան մշակութային փոխանակումներու ծիրին մէջ յաճախ անհատական նախաձեռնութեամբ հայկական պարի դասընթացներ կը գլխաւորէ եւրոպական տարբեր քաղաքներու մէջ, հայ մշակոյցն ու պատմութիւնը ծանօթացնելով օտարներուն: Անցեալ Փետրուարին Աւստրիոյ չափահասներու յատուկ Պիլտուկհաուս կեդրոնին մէջ, ան կազմակերպած է նմանօրինակ դասընթաց մը, որուն մասնակցած են գերմանացի եւ աւստրիացի շաղկերտներ: Անոնք հայկական պարի 3 ելոյր տոճած են Պիլտուկհաուս պալատին Հայելիներու սրահին մէջ:

Պարսկահայ հօր մը եւ բրիտանացի մօր մը գաւակը՝ Շաքէ Աւանգեսեան պարբերաբար կ'այցելէ Հայաստան եւ քայլ կը պահէ հայկական պարային ժառանգութեան մատուցումի ձեւերուն հետ, ինչպէս նաեւ կը ծանօթանայ նոր պարողուներու եւ պարեղանակներու: Անցեալ գարնան Հայկագետ համալսարանին հրատարակուած ան ելոյթ ունեցած էր Պէյրուսի մէջ:

«Այս սրահին մէջ մեկտեղուած ենք հիւսելու համար հայկական ժողովրդային պարերու գործ մը, ոգեկոչելով սերը, կեանքը, առատ հունձը, կրկնը, ջուրը, երաշտը, կորսուած սէրը, հայրենիքը... - գրած է Աւանգեսեան, պարային ելոյթներուն առիթով հանդիսատեսներուն բաժնուած յայտագիրի մը մէջ: Պիտի պարերը ծիսական, հարսանեկան, սուգի, ռազմական եւ քնարական պարեր»:

Երբ ելոյթներուն եզրափակիչ պարը եղած է շորոքի շարժումներով «Մարիամ» եւ «Կէօվեյ» սեղմ շուրջպար մը՝ կարծիր մոմի մը շուրջ: «Եւրաքանչիւր պարող աչ ծնորքին մէջ բունած էր լուսաւոր մոմ մը: Փոքրիկ մատներ իրարու միացած էին: Տեսարանը գեղեցիկ էր գրեթէ մուր հայելիներու սեւեակին մէջ», կը գրէ Աւանգեսեան, նշելով, որ հայկական մշակութային նրբութիւններուն նկատմամբ ցուցաբերուած գոյցոյր իրենց ու պարողներուն անմիջական հաղորդակցուելու խորապէս տպաւորած են գինը: «Կեօվեյնոր հիմնական տեղ ունի հայկական գեղջկական պարերուն մէջ եւ մինչեւ այսօր ծիսական յատուկ առիթներով կը պար-

ւի գիւղերու մէջ, - կը բացատրէ Աւանգեսեան: Շուրջպարին արմատները շատ խոր են եւ նշանակալից: Հին ժամանակներուն րուծակ-քուրմեր շրջագիծ մը կը գծէին իրենց շուրջ, չարիքը հետու պահելու եւ լաւ բաները կերս պահելու համար: Գիւղացիք կեօվեյնո կը պարէին առողջութիւն, հարստութիւն, բարգաւաճում, արգասաբերութիւն եւ առատ հունձը ապահովելու, ինչպէս նաեւ՝ չարիքը վաճելու համար (շրջանակէն դուրս): Նոյնիսկ այսօր հայկական կարգ մը գիւղերու մէջ հարսն ու փեսան իրենց նկատները միացած կը կանգնին շուրջպարի մը կեդրոնը, մինչ գիւղացիք 7 անգամ կեօվեյնո կը պարեն անոնց շուրջ, օրհնելով անոնց միութիւնը»:

Պիլտուկհաուս կեդրոնին մէջ Աւանգեսեանի կազմակերպած ելոյթները փառաբանութիւնը եղած են հայկական մշակութային հարուստ ժառանգութեան եւ գոյատեւումին, ինչպէս նաեւ՝ հայ ժողովուրդի վերապրումին: Աւանգեսեանի մարզած պարային մը ներկայացուցած է հայկական խորհրդանշական նոր պարերու շարք մը՝ հիմնուած մշակութային դիքագուրութեան, առաւելներու եւ հաւատալիքներու վրայ: Երկրորդ ելոյթին ընթացքին արտասանուած է պարսիկ բանաստեղծ Սաատիէն գերմաներէնի բարգմանուած երկու բանաստեղծութիւն: Անոնց մէկը կ'ըսէ. «Մարդիկ մարմնի մը մասերն են, ստեղծուած՝ նոյն նիւրէն: Երբ մէկ մասը կը վնասուի եւ կը տառապի, միւս մասերը անվնաս չեն մնար: Եթէ այլոց տառապանքը քեզ անտարբեր կը ձգէ, կարելի չէ քեզ մարդ կոչել»: Ասոր յաջորդած է Աւանգեսեանի «Աղօթք Գիւրիին» մեղանկարը: Վահան Թեքեանի «Աղօթք՝ վաղուան սեմին» բանաստեղծութեան գերմաներէն բարգմանութեան ընթացքին մէկէն ետք Աւանգեսեան պարած է «Ղարաբաղի եղբիկ» եւ բացատրած է, թէ «Ղարաբաղի խորհրդանշէ արժանապատուութիւնը ժողովուրդի մը, որ քեւ եղբիկի նման հալածուած է, սակայն կը շարունակէ գոյատեւել ամբողջական փառքով»:

Ելոյթներէն մեկուն ներկայ գտնուած է Սրբազան պարի «մայրը»՝ անուանի պարագրող Կարիէլ Վոսպյան:

Հրաժեշտի հաւաքոյթի մը ընթացքին Աւանգեսեան քարտեաներ օգտագործելով ներկայացուցած է պատմական եւ ներկայ Հայաստանը իր գաւառական տարագներով, գորգերով, ասեղնագործութեամբ, խաչքարերով, կաւէ իրերով, գօտիներով, գոգնոցներով եւ գոհարեղէնով: Ան յարգաբար հետեւողներուն հետ վերլուծած է յատուկ շաղկերտներու կարեւորութիւնը եւ անոնց խորհրդանշական դերը հայկական պարերուն մէջ: Աշակերտները դարձեալ արձանագրուած են հայկական պարերու յառաջիկայ խմբային դասընթացքին, որ տեղի պիտի ունենայ 2003ին:

Շաքէ Աւանգեսեան հպարտ եւ ուրախ կը զգայ, որ պարի մէջ իր ուղեւորութիւնը գինք առաջնորդած է Աւստրիոյ Պիլտուկհաուս պալատին նման հրաշալի վայր մը: «Փառահեղ եւ զարդարուն միջավայր մը, որ շատ հեռու է մեր ժողովուրդին հազուադիւրս ու բացարձակ գեղեցկութեամբ ու անփոխարինելի պարզութեամբ յատկանշուած կեանքէն, որուն ընթացքին ան պարած է եւ կը շարունակէ պարել»:

Աւանգեսեան յուզիչ եւ միաժամանակ բուժիչ կը համարէ նման իրագործումներ: «Ամէն անգամ երբ կը պարենք կեօվեյնո կեդրոնական մոմին շուրջ, կը դիտեմ գայն եւ չեմ կրնար չլսել իմ ժողովուրդիս անլսեալ ծայրերը, որոնք վայրագօրէն եւ դիտումնաւոր կերպով լռեցուած են», կը գրէ ան:

Աւանգեսեանի մեծագոյն բաւականութիւն կը պարգեւեն այն շեքմ եւ խորագրագ տպաւորութիւնները, զորս ան կը լսէ իրեմտեան օտար շրջանակներու մէջ պարի իր դասընթացներէն եւ ելոյթներէն ետք: «Մարդիկ անձամբ կամ ցամաքով կը բացատրեն, թէ ինչպիսի կապ մը կը գրան մեր հնադարեան արժանութիւնները հետ, եւ թէ՛ Արեւմուտքի մէջ իրենք բոլորովին կապը կորսնցնած են իրենց սեփական արժանութիւնը հետ, ինչ որ տառապանք կը պատճառէ իրենց», կը գրէ Աւանգեսեան:

Պատրաստեց՝
Լ. ԿԻՒՆՅԵԱՆ-ՍՐԱՊԵԱՆ

ՎԱՆ ԼԵՕ

Ծարուհակուած՝ 7րդ էջէն

Համար: Միշտ լուռ, Վան Լէօ նոր լուսանկարներ կը հանէր տուփերէ եւ կը դիտէր, մինչեւ որ որոշում կայացնէր, ապա քեզ կը հրաւիրէր իր աշխատասենեակը, ուր կը նստէիր մուծին մէջ, կլոր նստարանի մը վրայ: Ան կ'անցնէր լուսանկարչական գործիքին ետեւ, գոր իր հայրը տուած էր իրեն 1941ին, եւ կը քննէր ընդհանուր պատկերը, կը վերադասաւորէր լուսանկարը, կը բանար կամ կը գոցէր զանոնք, կը թելադրէր դիրքի թեթեւ փոփոխութիւն, ազնուօրէն դիտողութիւն կ'ընէր, թէ ինչո՞ւ է չէր անդրադարձած, որ դէմքէն ձախ կողմը աւելի լաւ էր: Եւ ասիկա կրնար ժամեր տեսել: Ծարաթ մը ետք կամ աւելի, ան կը հեռաձայնէր եւ կը հրաւիրէր տեսնելու միայն չորս լուսանկար, որոնցմէ մէկը կրնայիր ընտրել: Ապա շարաթ մը ետք դարձեալ կը հեռաձայնէր ըսելու համար, որ լուսանկարդ, այժմ արդէն մեծցուած եւ տքմալան աշխատանքով բարելաւուած, պատրաստ էր: Վան Լէօ կը պահէր լուսանկարին նեկթիվները:

Վան Լէօյի քով լուսանկարուելը այնքան բծախնդիր կերպով կազմակերպուած արարողութիւն մը կը թուէր ըլլալ, որ կը կանխէր ընդոծին որեւէ շարժում: Ոչինչ կը ձգուէր պատահականութեան: Անոր հազարաւոր լուսանկարներուն մէջ միայն քանի մը բացօթեայ տեսարաններ կան: Եւ երբ ան կը հանդիպէր զինք հետաքրքրող դիմագիծի մը, փերեզակի մը կամ մուրացկանի մը, զանոնք կը տանէր իր լուսանկարչատունը, ուր աւելի լաւ կրնար իր հակազդիտին տակ պահել արտաքին ազդեցութիւնները: Հետեւեալը զարմանալի չէր, որ անոր ամէնէն նախասիրած լուսանկարը Լէօյի դիմանկարն էր, ամէնէն արուեստականը: Զարմանալի չէր նաեւ, որ Թահա Հիւսէյն խոսելու անձ մըն էր լուսանկարելու համար: Լէօ զայն նկարած է միայն երկու դիրքով, եւ անոր լուսանկարին կը ցայտէր բնական լոյս մը: Վան Լէօ աւելի լաւ բնորդ մը չէր կրնար երեւակայել, քան՝ կոյր մը, որ մէտ ահնոց կը դնէր: Ան ի՞նչ կրնար պահանջել անձի մը, որ չէր գիտեր, թէ ի՞նչ երեւոյթ ունի, ուր մնաց, թէ ի՞նչպէս կ'ուզէ երեւիլ:

Ոճի շեշտաւորումը կը նուազեցնէ բովանդակութեան կշիռը: Այս պատճառով անիմաստ է տիպարներ փնտրել Վան Լէօյի դիմանկարներուն մէջ: Ան երբեք չէր հետաքրքրուած անբացատրելի բաներով, ինչպէս՝ տիպարներու ձողիկ արտացոլելով: Ինքնահաւանութիւն կը համարէր ասիկա, որովհետեւ հին օրերու մարդ մըն էր, միշտ յարգալիք:

«Ինչու, կը կարծես որ ան կ'ուզէ՞ր ունենալ այս լուսանկարները», քիչ մը անմեղօրէն ըսաւ ան, ցոյց տալով Հելիոփոլիսէն եկած կնոջ դիմանկարները: «Թերեւս անոր սիրահարը պիտի լքէ՞ր զինք»:

Վան Լէօյի յատուկ ոճով առնուած լուսանկարները 50 տարի ետք դիտող չի կրնար ըսել, թէ այդ կինը ինչո՞ւ ուզած էր լուսանկարուիլ: Ոչ ոք կրնայ ասել ի լաւ հասկնալ կեանքի փոխաբերութիւնը իբրեւ

թատրոն, «ըլլալը» իրեն դեր մը խաղալու վիճակը: Վան Լէօյի լուսանկարներուն մեծ մասը կը սաւառնի դէպի կախարդութեան ոլորտը, որովհետեւ ան սկիզբէն հասկցած է, թէ կախարդական պատրանքը կը բնորոշէ լուսանկարուող անձի մը չզոյրութիւնը: Իր կեանքին վերջին 2 տարիներուն Վան Լէօ շատ տկար էր իր լուսանկարչատան մէջ աշխատելու համար եւ գրեթէ դատապարտուած էր տունը մնալու: Այսուհանդերձ անոր կեանքին վերջին տասնամեակը յատկանշուած է հետզհետէ ծաւալող ճանաչումով, մեծ մասամբ անոր գործերուն ցուցահանդէսներով՝ Յերիպոսի եւ արտասահմանի մէջ: Անոր ստացած վարձատրութեան գագաթնակէտը Փրինս Քլաուս Ֆանտի մրցանակն է, որուն արժանացած է ան 2000ին:

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՐՈՇՈՒՄ, ԻՍՐԱՅԷԼԵԱՆ...

Ծարուհակուած՝ 5րդ էջէն

րայէլի հետ դաշինք կնքած Թուրքիա իր արտաքին գործոց նախարարին յայտարարութեամբ, անընդունելի կը նկատէր պաղեստինցիներուն դէմ առնուած խորաշէն քայլերը:

Արաբական աշխարհին կոնակ դարձնելու ամերիկեան դիրքորոշումին լաւագոյն ապացոյցներն էին Մ. Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի եւ նախագահ Ճորճ Պուշի կատարած յայտարարութիւնները, որոնք երկու սենեակներու մէջ արգելափակուած եւ հրասայլերով շրջապատուած դեկավարին կը դիմեն ահաբեկչական գործողութիւններուն վերջ մը դնելու պահանջով: Այս դիրքորոշումին տրուած արաբական աշխարհին պատասխանը ցարդ կը դրսեւորուի ժողովրդային ցոյցերուն ընթացքին Իսրայէլի դրօշին հետ ամերիկեան դրօշին հրկիզումով, բայց նաեւ՝ առաջին անգամ ըլլալով, Մ. Նահանգներու ամէնէն մօտիկ արաբ դաշնակից Քուէյթի խորհրդարանին խիտ ոճով, որ անցեալ երկուշաբթի խտօրէն քննադատեց Մ. Նահանգներու ոչ միայն անտարբերութիւնն ու կողմնակալութիւնը, այլ նոյնիսկ՝ մեղապնդութիւնը:

Պատժելու թիրախը Պաղեստինն ու պաղեստինեան ղեկավարութիւնը ընտրելու այս ընթացքը ի՞նչ հետեւանքներ կրնայ ունենալ, դժուար է կանխատեսել, բայց իսրայէլեան ապահովական ազբերները ահաբեկչական հարիւր նոր գործողութիւններ եւ իսրայէլի շահերը հարուստ ուսանակ յարձակումներ կը նախատեսեն: Իսկ թէ ամիսներ է վեր շրջանառութեան մէջ դրուած Իրաքը հարուածելու ամերիկեան ծրագիրը ի՞նչ վախճան կրնայ ունենալ դէպքերու այս նոր գարգացումով, թերեւս նոյնիսկ Ամերիկան չի գիտեր:

ԿԸ ՆՈՒՒՐԵՆ

●Աւետիս Ծեհրեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի Ս. Աստուածածին եկեղեցւոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները: Յովհաննէս Տօնապետեան 10,000 լ.ո., Լուկաս Դուկասեան 10,000 լ.ո., տէր եւ տիկին Վրէժ Միցասեան 20,000 լ.ո., տէր եւ տիկին Խաչիկ Նահապետեան 25,000 լ.ո., Ժողով Աստմ 10,000 լ.ո., Էպի Խալիլ ընտանիք 20,000 լ.ո., Նմրը Զրտի 10,000 լ.ո., Տաիտս ընտանիք 15,000 լ.ո., Մանուր Ծառայ 20\$, տիկին Խուրի 10,000 լ.ո., Ժորձ Հանգա 10\$, Նեպի ժամաթա 20,000 լ.ո., Էտուար Դազալ 25,000 լ.ո., Տիգրան Դազալ 10,000 լ.ո., Զոհրապ Դազալ 20,000 լ.ո., Ռոնի Խուրի 20,000 լ.ո., Ժամ Սալիպա 10,000 լ.ո., Թոնի Իպրահիմ 5,000 լ.ո., Հալիմ Զախուր 20\$, Նեմի Հըպէյ-քա 20,000 լ.ո. եւ Էլի Խուրի 10\$, Զամիլ Շալահուս 20,000 լ.ո., Էլի Նախիճ 10,000 լ.ո., տէր եւ տիկին Անթո Տ. Գեորգեան 10,000 լ.ո., Սարգիս Մանուկեան 10,000 լ.ո., Ալեք Ասպպա 20,000 լ.ո., Էտի Ասպպա 20,000 լ.ո., Լիցա Ապու Ասալի 10\$, եւ Սեմիր Զասէյմ:

●Արշալոյս Կայէնեանի մահուան առիթով, փոխան ծաղկեպսակի Ս. Աստուածածին եկեղեցւոյ եղած են հետեւեալ նուիրատուութիւնները: Տէր եւ տիկին Անթո Զեթեղեան 10\$, տէր եւ տիկին Գօգօ Մարտիրոսեան 10,000 լ.ո. եւ Յակոբ Զէտեղեան 20,000 լ.ո.:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Այնթապի հերոսամարտի գոհուած հայրենակիցներուն Եւ մարտիկներուն 82րդ տարելիցին առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ 2002, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԱՅՆԹԱՊԻ
ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՀԱԼԷՊ ԱՐժ. Տ. ԱՏՈՄ ԱՆԱԳ ԶԷՆՅ. ԶԷՆԱՅԵԱՆԻ Վախճան քառասունքից առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ 2002, Հալէպի Ս. Զատաւոր Մանուկեան եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍԵՂԱ ՃՐՃՐԵԱՆԻ (ԾԵՆԱԼ՝ ԳԱՆԹԱՐՃԵԱՆ) մահուան քառասունքից առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ 2002, Նոր Մարշի Սրբոց Զատաւոր Մանուկեան եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԴԱՄԱՍՍՈՍ ԴԱՄԱՍՍՈՍ ԱՐՔՈՒՇԻ ԽՈՇԱՄԴԵԱՆԻ մահուան քառասունքից առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ 2002, Դամասկոսի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՋԵՓԻՒՎ ԿԻՐԻՒՆԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ 2002, Նոր Մարշի Սրբոց Զատաւոր Մանուկեան եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԻԿ ԳԱՋԷԶԵԱՆԻ մահուան քառասունքից առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ 2002, Նոր Մարշի Սրբոց Զատաւոր Մանուկեան եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՇԱԶԷ ՆԱՐԿԻԶԵԱՆԻ (ԾԵՆԱԼ՝ ԳԱՐՈՒԷԼԵԱՆ, մահացած Լիոն) մահուան քառասունքից առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ 2002, Նոր Մարշի Սրբոց Զատաւոր Մանուկեան եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՅԱԿՈԲ ՍՅԱՆՊՈՒԼԵԱՆԻ մահուան քառասունքից առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ 2002, Նոր Ատաճալի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐԵԱՆԻ մահուան Ա. տարելիցին առիթով, հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 7 Ապրիլ 2002, Նոր Ատաճալի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. պատարագի:

ԽԱՉԻԿ ԹԻԻ 5116

Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՂԱՋԱՐԵԱՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										
11										

ԸՈՐԻՋՈՆԱԿԱՆ ՈՒՂԱՇԱՅԵԱՆ

- | | |
|--|--|
| 1. Զամբրդական դաւազան - Կողմ: | 1. Արու զաւակ - Ստամբուլ խողովակ: |
| 2. Կողմ պուտ - Հայկական ամիսներու 17րդ օրը: | 2. Նախաճաշիկ - Որսի կենդանի: |
| 3. Կաթնայ - Թօշիկ: | 3. Ափրիկեան երկիր - Տօնական թափօր: |
| 4. Մարմնով փոխ: | 4. Շաղկապ - Բազմութիւն - Ժխտական մասնիկ: |
| 5. Կրկնուած բաղաձայններ - Անլուծելի - Անորոշ դերանուն: | 5. Մանկեւ - Էական բայ - Այբուբենէն: |
| 6. Կանանչորակ պատուական քար - Յոյն դիցաբանութիւն: | 6. Զենհաս - Հողաբուր: |
| 7. Քայլաչափ - Աստիճան, սանդուխ: | 7. Միջերկրականեան երկիր - Երկտարականութեան միաւոր: |
| 8. Հողովակերտ մասնիկ - Մակոյկ: | 8. Մեկին - Կենդանիներու խումբ: |
| 9. Զեւ - Անպատկառ (Հակ.): | 9. Քրիստոսավաճառ: |
| 10. Սոգի - Համբերել, հանդուրժել: | 10. Մօր առաջին կաթը - Երկնատուր սնունդ: |
| 11. Այբուբենէն - Կրտսած ոչխար - Տառի մը անունը: | 11. Փոքրացնող միաւոր - Սպանացի գեղանկարիչ: |

ԹԻԻ 5115

1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Ա	Ր	Փ	Ս	Ի	Ն	Ն	Ն	Ն	Ն
2	Ա	Ր	Փ	Ս	Ի	Ն	Ն	Ն	Ն	Ն
3	Ք	Գ	Ս	Լ	Ի	Կ	Ա	Ղ	Ա	
4	Ի	Ե	Ճ	Ա	Ա	Լ	Լ	Ա	Չ	
5	Ի	Ե	Կ	Ա	Ս	Ի	Ն	Ն	Ն	
6	Ա	Ն	Ի	Ե	Կ	Ա	Ս	Ի	Ն	
7	Ա	Վ	Կ	Ո	Մ	Ի	Ն	Ն	Ն	
8	Տ	Ր	Գ	Կ	Գ	Ի	Լ	Փ		
9	ՈՍ	Ա	Ս	Ի	Ն	Ն	Ն	Ն		
10	Ք	Ա	Ս	Լ	Ի	Ն	Ն	Ն		
11	Գ	Լ	Ե	Ր	Կ	Ա	Ղ	Ա		

(*) Վերոյիշեալ յայտագիրները ենթակալ կըրնան ըլլալ որոշ փոփոխութիւններու:

ՕՐԱՏԵՏՐ

Panasonic

ՇԵՆԱՏԵՍԻԼ

Թ.Է.Լ. 10:00 - Սապահօ 13:00 - Մարտի հանա

ՄՈՒՍԹԱՔՊԱԼ 7:00 - Լուրեր 8:30 - Այս ամապի

20:30 - Պէսք սէլըր 21:30 - Մարպախան 23:30 - Արաբական ժապաւէն

14:00 - Ետրոնիւն 14:30 - Լուրեր 15:00 - Արաբ. ֆիլմաշար 17:00 - Պէսք սէլըր 18:00 - Շքրիկ Հոյն 18:30 - Արաբական ֆիլմաշար

19:30 - Արաբ. լուրեր 21:00 - Մէլիսա 22:00 - Ամերիկեան ժապաւէն

23:00 - Սի չէյնձ

ԷՍ. Թ.Վ.Ի. 7:30 - Թելէ մարէն 9:30 - Քիլիս

10:30 - Քի շի 11:00 - Ուստրալիա 11:30 - Քըյ մէյլէ այլէ 12:00 - Էմ. Թի. Վի. սփորթ

12:30 - Էս. Էր. Շի. 13:00 - Մարիա Սելէսթի 14:00 - Տուրնայ Յրանա 2 14:30 - Սի. Էս. Էս. ի լուրեր 15:15 - Սիւնի աղանի 16:30 - Փոքեմոն 17:00 - Միլի սրիտիօ 17:45 - @Էմ. Թի. Վի. 18:45 - Էնամորատա 20:00 - Արաբերէն լուրեր 21:30 - Ռաիէր պէթը 21:30 - Թաիթիթ 22:30 - Էմ. Թի. Վի. Սփորթ 23:45 - Տիվերթիսիան

13:00 - Ֆիլմ ինֆօ 14:00 - Անգլերէնով լուրեր 14:20 - Ֆրանսերէնով լուրեր 14:40 - Հայերէնով լուրեր 15:30 - Արաբ. ֆիլմաշար 16:30 - Թելէթապիկ 17:00 - Ըզըր բըպիկ 17:30 - Ամերիկայի ֆանիէս հոմ վիտէօյ

18:00 - Արաբական ֆիլմաշար 19:00 - Տուրնայ Քրիթ 20:00 - Արաբերէն լուրեր 20:30 - Ռուսուս 20:32 - Ման սանարպահ մէլիոն 21:30 - Ամերիկեան ժապաւէն՝ «Տը թիչ մէն» ուայճ» 23:30 - Լա ֆաւ Նիքիթա

ԷՆ. ՊԻ. ԷՆ. 15:00 - Լուրեր 16:00 - Ման ու ֆիլմ 17:00 - Աուալի ֆիլմայի հըթիսատ 17:30 - Սիւնէմ / 35 mm 18:00 - Նո քոմէր 18:15 - Տրիստոսիա 19:00 - Լուրեր 20:00 - Մըն ալ սապահիա 20:30 - Արաբական յայտագիր 22:00 - Մասայա 23:00 - Թաիթիթ ալ էսուս 23:30 - Մարպական լուրեր 00:00 - Լուրեր

ԷՆ. ՊԻ. Թ. Վ.Ի. 7:30 - Լուրեր 8:00 - Սապահ էլ ուարտ 12:30 - Մատարաբ 13:30 - Եգիպտական ֆիլմաշար 14:00 - Լուրեր 15:15 - Ինքն ուս անա 17:00 - Պատարագ 17:30 - Երգահանդէս 19:00 - Ծարապական 20:00 - Արաբերէն լուրեր 20:30 - Երաժշտութիւն 21:30 - Ես լէյլ էս այն 23:30 - «Տը թոպ»

ՆՈՒՈՒ Թ.Վ.Ի. 7:30 - Լուրեր 8:00 - Սապահ էլ ուարտ 12:30 - Մատարաբ 13:30 - Եգիպտական ֆիլմաշար 14:00 - Լուրեր 15:00 - Վաւերագրական 16:00 - Հըքայթ խուլոյ 17:00 - Ուիլիյի ֆէմիլի 18:00 - Սիարթի ալ ըլսափիլա 18:30 - Մարիամ Նոր 19:30 - Լուրեր

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

☆ **ԽՈՅ** (21 Մարտին 20 Ապրիլ) Երեկուան փոթորիկը անցած է եւ հարցերը կարգադրուած են ձեր փափաքին համաձայն: Օրը պիտի անցնի խաղաղ:

☆ **ՅՈՒԼ** (21 Ապրիլէն 21 Մայիս) Ուսանողներ, որոնք քննութիւն անցուցած են, պիտի ունենան լաւ արդիւնք: Եթէ գործի մարդ էք դարձեալ պիտի ունենաք յաջող նախաձեռնութիւն եւ պիտի վարձատրուիք:

☆ **ԵՐԿՈՒՈՐԵԱԿ** (22 Մայիսէն 21 Յունիս) Լաւ լուրեր պիտի ստանաք նիւթական հարցի մը վերաբերելով. մարդիկ, որոնք ձեզի դրամ պարտական էին, պիտի վճարեն ձեզ: Օրը պիտի անցնի ուրախ:

☆ **ԻՆԵՑԳԵՏԻՆ** (22 Յունիսէն 23 Յուլիս) Ձեր գերզգայնութիւնը պիտի օգնէ ձեզի ըմբռնելու ձեզ շրջապատող անձերուն մտածումները եւ կարողալու գանձեր գիրքի մը նման: Մնացեք լաւատես:


☆ **ԱՌԻՒԾ** (24 Յուլիսէն 23 Օգոստոս) Փիզիքայէտ շատ եռանդուն եւ առողջ վիճակ մը պիտի ունենաք: Ամէն մարդ պիտի ուզէ գիտնալ գաղտնիքը ձեր այս կեցուածքին եւ տրամադրութեան:

☆ **ԿՈՅՍ** (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր) Դուք ձեզի պիտի ընծայէք փոքր հաճոյք մը եւ ուրախութիւն, ու այս տրամադրութիւնը ձեր շրջանակին մէջ պիտի ըլլայ վարակիչ ու հաղորդական:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԹԵՆՈՒՆՏՕ

ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐ ՓԱՅՆՈՒՆ ԱՐԴԻԻՆՔՆԵՐ ԱՐՁԱՆԱԳՐԵՑԻՆ ԱՆԹՈՆԻՒ ՄԷՋ

Անթոնիի մէջ (Փարիզի արուարձաններէն) տեղի ունեցող թեքուանտոյի 20րդ բաց մրցաշարքին, Հայաստանէն իրենց մասնակցութիւնը բերող մարզիկներ բաւական լաւ արդիւնքներ արձանագրեցին, 27 երկիրներէ ծամանած մարզիկներուն մէջ: Անոնց իրագործումը ողջունելի է, որովհետեւ անոնք շահեցան երկու ոսկի եւ երկու արծաթ մետալներ: Ոսկի մետալներուն արժանացան Լեւոն Փաշայեպեան (55էն 59 քկ. դասակարգին մէջ) եւ Կարէն Մատինեան (59էն 63 քկ.): Իսկ արծաթ մետալներուն տիրացան Տիգրան Վարդանեան (45էն 48 քկ.) եւ Մետրոպ Գասպարեան (48էն 51 քկ.): Անոնք բոլորն ալ կը ներկայացնէին Երեւանի «Վամբ Սասուն» ակումբը:

«Վամբ Սասուն»ի մարզիչ Վարդան Շամոյեան, որ միեւնոյն ժամանակ Հայաստանի թեքուանտոյի հաւաքականին մարզիչն է, իր մարզիկներուն արձանագրած այս փայլուն արդիւնքները շնորհանդէս է շնորհակալութիւն յայտնեց Հայաստանի ֆրանսական համալսարանի փոխ նախագահ Միքէլ Շահկելտեանին, որ իր լայն աջակցութիւնը բերաւ հայ մարզիկներուն:

Շամոյեան, ինչպէս նաեւ Վամբ Սասուն»ի նախագահ Տիգրան Փաշայեպեան չմոռցան իրենց շնորհակալութիւնները յայտնելու նաեւ Անթոնիի (որուն քաղաքացին է Փարիզի Տեմէճեան) եւ Փարիզի հայ համայնքին, որ մրցաշարքին ընթացքին ցորայիզ կանգնեցաւ հայ մարզիկներուն:

●ԱՅՍՕՐ՝ Ուրբաթ, Երեւանի «Տինամօ» մարզադահլիւն մէջ կը սկսի Հայաստանի թեքուանտոյի ախոյեանութիւնը, որ պիտի ըլլայ լաւագոյն պատրաստութիւնը յառաջիկայ Մայիսի Անգարայի մէջ տեղի ունենալիք Եւրոպայի ախոյեանութեան մրցաշարքին: Լաւագոյն արդիւնքներ արձանագրող մարզիկները մաս պիտի կազմեն Հայաստանի հաւաքականին:

Ըստ Հայաստանի 50 մարզիչներու կարծիքին՝ հայ մարզիկները Եւրոպայի ախոյեանութեան մրցումներուն կրնան բաւական լաւ արդիւնքներ արձանագրել եւ անշուշտ բազմաթիւ մետալներու տիրանալ, որովհետեւ հետպիտեմ անոնք միջազգային փորձառութիւն ձեռք կը ձգեն:

●ՅԱՌԱՋԻԿԱՅ Ապրիլ 25ին, Փրակայի մէջ (Չեխիա) տեղի պիտի ունենայ իր տեսակին մէջ եպսի ճատրակի միջազգային մրցաշարք մը, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն աշխարհի լաւագոյն 32 վարպետները:

Կակիկալուէր, որ այս մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերեն նաեւ հայրենի երկու վարպետներ՝ Ռաֆայել Վահանեան եւ Սմբատ Լպուտեան, որոնք ՖԵՏԵԻ դասաւորման մէջ կը գրաւեն յաջորդաբար 26րդ եւ 27րդ դիրքերը:

Հայաստանի ճատրակի ֆետերասիոնը կը յայտնէ, որ թէն ալ մրցաշարքին պիտի մասնակցին 32 վարպետներ, սակայն ծրագրուած է նաեւ նկատի առնել այլ խաղացողներ ալ, որոնք սակայն նկատի չեն առնուած ՖԵՏԵԻ ընդհանուր դասաւորման մէջ:

●ՄՈՍԿՈՒՅԻ մէջ տեղի ունեցող յողարշաբի աշխարհի ախոյեանութեան մրցումներուն, հայրենի յողորդները գրեթէ ոչինչ կատարեցին, որովհետեւ անոնց արձանագրած արդիւնքները բաւարար չէղան, որ անոնք յաջողին անցնիլ յաջորդ հանգրուանի մրցումներուն:

Առաջին օրուան մրցումներուն, Չինաստան շաղղեցաւ աղջկանց 4x200 մետր մրցումներուն աշխարհի նոր մրցանիշ մը հաստատել, արձանագրելով՝ 7 վայրկեան 46" 30 արդիւնք մը: Այսպիսով, Չինաստան յաջողեցաւ կոտրել նախկին մրցանիշը՝ 7" 47" 14, որ հաստատուած էր Արիտանիոյ կողմէ, անցեալ տարի 10 Օգոստոսին՝ Նորիշի մէջ (Անգլիա):

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի ՄՐՅԱՇԱՐՔ

ՄԻԼԱՆՈՅԻ ԵՐԿՈՒ ԿԱԶՄԵՐԸ՝ ԻՆԹԵՐ ԵՒ Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ ՊԱՐՏՈՒԵՑԱՆ

ԵՈՒ. Է. ԷՖ. Ա.Ի մրցաշարքի կիսաարտական հանգրուանի երրորդ մրցումներուն, երէկ Տորթմունտի մէջ Պորուսիա 4-0 արդիւնքով ծանր պարտութեան մատնեց իր հիւրը՝ Ա. ՍԷ. Միլանը, 52 հազար համակիրներու ներկայութեան:

Երէկուան նախատեսութիւնը շետակ դուրս եկած եւ իտալական կազմին պաշտպանողական գիծը չկրցաւ ցուցնել արաբիցի յառաջապահ Մարսիօ Ամորոզոն, որ եղաւ անոր պատուհար՝ հեթորք մը իրագործելով (8րդ փենալթիով, 34րդ եւ 39րդ), մինչ անոր խմբակից Եորկ Հայնրիչ նշանակեց չորրորդ կոլը (62րդ):

Իր արձանագրած այս յաղթանակէն ետք, Տորթմունտ մեծ քայլ մը առաւ դէպի արտական մրցում: Դարձին, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ Հինգշաբթի օր, իտալական կազմը կը ցոյնուի բաւական դժուար առաքելու:

Թեան մը դիմաց, որովհետեւ պէտք ունի առնուազն 5-0 արդիւնքով յաղթանակի մը:

Երէկուան երկրորդ ճակատումը՝ Ինթեր Միլանի եւ Տեյէնուրտ Ռոթերտամի միջեւ, վերջ գտաւ ի նպաստ հոլանտական կազմին, որ 1-0 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեց, շնորհիւ՝ Իվան Բորտոպաի նշանակած կոլին (51րդ՝ սխալմամբ իր բերդէն ներս): Մրցուցիչի ներկայ էր շուրջ 40 հազար համակիր:

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՑԱՐԴ 8 ԽՈՒՄԲԵՐ ԱՊԱՀՈՎԱԾ ԵՆ ՓԼԷՅՕՅԻ ՏՈՄՍԸ

ԷՆ. ՊԻ. Էյի երէկուան մրցումներուն, Ուաշինկթըն Ուիչարտս, որ Միլուոքի Պաքսի դէմ տեղի ունեցած մրցումին դաշտ ներկայացած էր առանց Մայքըլ Ճորտնի, կրեց եղանակի իր 41րդ պարտութիւնը, 105-90 արդիւնքով պարտուած հեռանալէ ետք անոր դաշտէն:

Ուիչարտսի պատասխանատուները յայտնեցին, թէ 39 տարեկան Ճորտնը, որ շաբաթասկիզբին Լոս Անճելըս Լէյքըրսի դէմ տեղի ունեցած մրցումին դաշտ ներկայանալու միայն նշանակած էր երկու կէտ, մինչեւ այս եղանակին աւարտը պիտի չկարենայ դաշտ ներկայանալ, վիրաբուժութեան ենթարկուած իր ծունկին ստեղծած հարցին պատճառով (բորբոքում): Ան անցեալ 27 Փետրուարին ենթարկուած էր վիրաբուժութեան, սակայն Մարտ 20ին վերադարձած դաշտ:

Ինչպէս որ պարտութեան մատնեց Տիթոր-Յիթ Փիսթընը, որ արդէն իսկ իր տոմար

ապահոված էր: Յաղթանակ կազմին մարզիկ Քրիս Ուեպլըր նշանակեց 28 կէտ:

Ստորեւ՝ երէկուան մրցումներուն արդիւնքները.

Շարլոթ Հոռնէթս - Մայեմի Հիթ	97-90
Ֆիլադելֆիա Սիքսըրզ - Տեյնիքս Սանյ 89-83	
Թորոնթօ Ռեյճըրզ - Շիքակօ Պուլզ 117-104	
Սաքր. Քինկզ - Տիթորնիթ Փիսթընզ 107-86	
Միլուոքի Պաքս - Ուաշ. Ուիչարտս 105-90	
Մինեսոթա Վուլվզ - Մեմֆիս Կրիկիզ 92-81	
Նիւ Ճըրզի Նեթս - Լ. Անճելըս Լէյքըրզ 94-92	
Ս. Անթոնիօ Սփըրզ - Սիթըլ Սուփըր. 90-88	
Եուրօ Ճէյ - Լոս Անճելըս Բիփթըրզ 99-87	

Ստորեւ՝ այսօրուան մրցումներուն յայտագիրը.

Ինդիանա Փէյլըրզ - Արլանթա Տոքս	
Քիլիկէնզ Բաւալիթզ - Օրլանդօ Մեյնթ	
Սան Անթոնիօ Սփըրզ - Վիրտսըն Ռոքէթս	
Լոս Անճելըս Բիփթըրզ - Տալաս Մավըրիքս	
Մինեսոթա Վուլվզ - Տեմպլը Նակէթս	
Նիւ Եորք Նիքս - Փորթլենդ Թրէյլ Պլէյզըրզ	

Ստորեւ՝ դասաւորումը (աստղանիշ կրող խումբերը ապահոված են փլէյօֆի մրցումներուն իրենց տոմարը).

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆ (ԱՏԼԱՆՏԵԱՆ ԳՕՏԻ)	ՅԱՂԹ.	ՊԱՐՏ.
Նիւ Ճըրզի Նեթս*	48	27
Պոսթըն Սեյթիքս	43	32
Օրլանդօ Մեյնթ	40	33
Ֆիլադելֆիա Սիքսըրզ	39	35
Ուաշինկթըն Ուիչարտս	34	41
Մայեմի Հիթ	32	42
Նիւ Եորք Նիքս	28	45

(ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ԳՕՏԻ)		
Տիթորնիթ Փիսթընզ*	45	30
Շարլոթ Հոռնէթս	39	35
Միլուոքի Պաքս	39	35
Ինդիանա Փէյլըրզ	36	37
Թորոնթօ Ռեյճըրզ	36	38
Արլանթա Հոքս	30	44
Էլիվէնտ Զաւալիթզ	26	48
Շիքակօ Պուլզ	17	57

ԱՐԵՒՍՏԵԱՆ ՇՐՋԱՆ (ՄԻՋԱՐԵՒՍՏԵԱՆ ԳՕՏԻ)		
Տալաս Մավըրիքս*	51	22
Սան Անթոնիօ Սփըրզ*	50	24
Սիթընթա Վուլվզ*	46	28
Եուրօ Ճէյ	42	33
Հիւսթըն Ռոքէթս	27	46
Տեմպլը Նակէթս	23	50
Մեմֆիս Կրիկիզ	19	55

(ԽՆՂԱՂԱԿԱՆ ԳՕՏԻ)		
Սաքրամենթօ Էնկլզ*	55	19
Լոս Անճելըս Լէյքըրզ*	53	22
Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ*	44	30
Սիթըլ Սուփըրտոնթս	43	33
Լոս Անճելըս Էլիվթըրզ	37	38
Ֆէօնիքս Սանզ	34	41
Կոլորադօ Սթըյթ Ուորիթըրզ	19	55

Երէկուան մրցումներէն ետք ուրիշ բարձրացաւ փլէյօֆի մրցումներուն իրենց տոմարը ապահովող խումբերուն թիւը: Միւնեսոթա Վուլվզ (Միչիգանի մետան գօտի) եւ Փորթլենտ Թրէյլ Պլէյզըրզ (Խաղաղական գօտի) եղան այն երկու երկու խումբերը՝ Արեւմտեան շրջանէն, որոնք միացան մնացեալ վեցին:

Նշենք, թէ ցարդ Արեւելեան շրջանէն երկու խումբեր ապահոված են իրենց տոմարը, իսկ Արեւմտեան շրջանէն՝ վեց խումբեր: Միւնեսոթա Վուլվզ իր դաշտին վրայ 92-81 արդիւնքով պարտութեան մատնեց Մեմֆիս Կրիկիզը: Յաղթական կազմին մարզիկներէն Շոնիշ Պիլիսիս նշանակեց 26 կէտ, 11 ռիպաուստ եւ 10 էսիսթ:

Ս ա թ Ր ա մ է ն թ օ Քինկզ 107-86 ար-

ՅՈՐԴԱՆԱՆ ԵՒ ՍՈՒՐԻԱ ՖԻՖԱԵՆ ԿԸ ՊԱՅԱՆՁԵՆ ԻՍՐԱՅԷԼԻ ԿԱՆԱԿԱՅՈՒՄԸ

ՖԻՖԱՆ երկ յայտնեց, թէ Յորդանանի ֆուտպոլի ֆետերասիոնէն ստացած է ֆաքս մը, որ կը պահանջէ իսրայէլի կախակալումը՝ միջազգային ամէն տեսակի մրցումներէն:

«Յորդանանի ֆետերասիոնէն ստացանք ֆաքս մը, որ կը պահանջէ Իսրայէլի կախակալումը: Ներկայիս միայն այս յայտարարութիւնն է, որ կրնանք իրապարակել», կ'ըսէ ՖԻՖԱԻ մէկ պատասխանատուն՝ Անտրէաս Հեթէն, «Ռոյթըրզ»ի հետ իր կատարած հարցազրոյցին ընթացքին:

ՖԻՖԱԻ նախագահ Ժոզէֆ Պլէթըրի ուղղուած նամակին մէջ, Յորդանանի ֆուտպոլի ֆետերասիոնին նախագահ Ալի իշխանը, որ Ապտալա Թագաւորին եղբայրն է, կ'ըսէ, թէ Իսրայէլի ֆուտպոլի ազգային խումբին եւ կամ անոր ակումբներուն կատարելիք մրցումները առայժմ պէտք է առկախուին՝ պաղեստինցիներուն դէմ անոր կատարած անմարդկային եւ ոճարային արարքներուն պատճառով:

Նմանօրինակ յայտարարութիւն մը կատարած է նաեւ Սուրիոյ ֆուտպոլի ֆետերասիոնին նախագահը՝ Ֆրանք Պուլօ, կը յայտնէ դանիական «Էքսթրապոլիտէթ» օրաթերթը:

«Կը պահանջենք ամէն տեսակ միջազգային մրցումներէն Իսրայէլի ստեղծումը, այնպէս, ինչպէս պատահեցաւ այլ առիթով մը, երբ ՖԻՖԱՆ կախակալեց Հարաւային Աֆրիկէն», կը յայտնէ օրաթերթը, մէջբերելով Պուլիոյ խօսքերը, որոնք նամակով մը դրոյնուած են ՖԻՖԱԻ նախագահ Ժոզէֆ Պլէթըրի:

Իսրայէլի ֆուտպոլի ազգային խումբին մարզիչ, դանիացի Ռիչըրտ Մէյլըր - Նիլսըն, որ 1992ին Դանիոյ ֆուտպոլի ազգային խումբին հետ շահած էր Եւրոպայի ախոյեանութիւնը, նոյն այդ օրաթերթին հետ իր ունեցած հարցազրոյցին ընթացքին ըսաւ, թէ նմանօրինակ առժամեալ կախակալում մը կ'ակնկալէ, բայց չի յուսար, որ Իսրայէլ դուրս դրուի ՖԻՖԱԻ շարքերէն:

Դանիոյ ֆուտպոլի ֆետերասիոնին նախագահը՝ Լարս Պերենթ, դարձեալ նոյն օրաթերթին համաձայն՝ կը յայտնէ, թէ որեւէ վտանգ չի սպառնար յառաջիկայ Ապրիլ 17ին Քոփենհագենի մէջ տեղի ունենալիք Դանիա - Իսրայէլ ֆուտպոլի միջազգային մրցումին. նկատի ունենալով, որ այդ մէկը իրենց համար պատրաստութիւն մըն է 2002ի Մոնտիալին: Իսրայէլ արդէն չէ կրցած Մոնտիալի իր տոմար ապահովել:

ՓԵԼԷԻ ՇԱՊԻԿԸ ՎԱՏԱՌՈՒԵՑԱԻ 220 ՀԱՁԱՐ ՏՈՒԱՐԻ



Փելէի շապիկը՝ «Էրիսթիզ»ի տան մէջ:

Անցեալ շաբաթավերջին «Էրիսթիզ» աճուրդի փան մէջ (Լոնկոն) վաճառուեցաւ որագիւցի ֆուտպոլի ասպղ Փելէի թիւ 10 շապիկը՝ 220 հազար փոլարի: Եւրոպայի վաճառքը ակնկալուածէն երեք անգամ ատելի սուղ վաճառուեցաւ: Փելէի զայն հազար էր 1970ի Մոնտիալի արարականին: Երբ հարց արուած է անոր, թէ արդեօք ի՞նչ մեկնաբանութիւն ունի կապարակիլ այս գծով, ան ժողիպով մը դասախոսեցաւ, թէ ինք չէր այդ գիւրը որոշողը, հետեւաբար անիկա այդքան ալ կ'արժէ:

ՄԱՐՁԻԿ

ԻՍ. ՏԱՐԻ, 2002
ԹԻԻ 2 (236)

Հ.Մ.Ը.Մ. «ՄԱՐՁԻԿ» ՊԵՐՈՒԹԻ ՄԷՋ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵՂՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ

«Մարզիկ»ի այս թիւով տեսնել՝

- Խմբագրական-Գրար՝ Հ.Մ.Ը.Մ.Ի կրտսերները
- Ամերապիտեմբ բարոյական արժէքները (ԺԳ)- Յարութ Զեքիճեան
- Ղեկավարը պէտք է ընդունելի ըլլայ ժողովուրդէն- Կ. Յովհաննէսեան
- 21րդ դարու ֆուտպոլի նոր դիմագիծը- Գ. Թորոյեան
- Ի՞նչպէս տիպար փաղանգ մը ունենալ- Յակոբ Զալպեան
- Հ.Մ.Ը.Մ.Ի Գահիրէի «Արարատ» մասնաճիղի պատրաստութիւնը կրտսերներու խումբին Լիբանան այցելութիւնը

Թիւր Կ'ընդգրկէ նաեւ Հայրենի մարզական կեանքի, Համացանցի եւ մանկապատանեկան բաժիններ, ինչպէս նաեւ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի-ական կեանքի անդրազարձաններ:

Ստանալու համար դիմել Համազգայինի գրախանութ: Սակ՝ 3000 Լ.՝:

